

ընտյթները. առջևից սողում, քսմսում, իսկ յետևից հայնոյում են և իրանց նամակներն տակ միշտ ստորագրում են ըստնարհ ծառայ» բառերով:

Ուշագորութեան արժանի է այն խօսքը, թէ մարդ «կամ ծառայութեամբ պէտք է զբաղուի, կամ գրականութեամբ»: Որքան դառը հեգնութիւն կայ այդ խօսքի մէջ, թէև այդ չի զգում պարոն «խոզէինը»: Գրականութեամբ զբաղուել... Իսկ ո՞վ կը տայ ինձ իմ ամսական 16 ռուբլի ոտճիկը. հայոց գրականութիւնը... Ձեզ նման անհետաքրքիր անհատներից բաղկացած հասարակութիւնը, պարոն «խոզէին», մեր այնքան խղճուկ գրականութիւնը և մի քանի հատիկ գրական տաղանդները չի կարողանում ապահովել. իսկ ի՞նչ կը լինէր, եթէ ամեն մի գրականութիւնը սիրող ուզենար գրականութեամբ զբաղուել: Հեգնեցէք, ինչո՞ւ չէ. չէ՞ որ ձեր պատուհաններից ամեն ժամանակ, ամեն ժամ լսելի են կուշտ և այնքան անդա՛րդ ծիծաղի ձայներ... չէ՞ որ դուք աշխարհում ձեր փորից ու փողից աւել բան չէք ուզում ճանաչել... և ինչքան շատ էք դուք...

Ա. Գուլօսան

ՇՈՂԵՐ ԽԱԿԱՐԻ ՄԷՋ

«Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութեան» 1903—1904 ուսում. տարեշրջանի «Տեղեկագրից» քաղում ենք հետևեալ միութարական տեղեկութիւնները:

Պարոն Տիգրան Աֆրիկեանը, որ իր հաշուով պահում էր 2 երկսեռ դպրոց Բարանդուզ գաւառի թրքախօս Բարադու և Դիզաթէքի հայ գիւղերում 4—5 տարուց ի վեր, կամենալով մի իրական, շօշափելի ծառայութիւն մատուցանել լքուած, սնտեսապէս քայքայուած և իր ազգային առանձնայատկութիւնները կորցրած պարսկահայ գեղջուկի կրթական գործին, յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է՝ 39 հայաբնակ գիւղ ունեցող, և 1200 տնից բաղկացած Ուրմի գաւառը իր շրջակայքով պատել դպրոցական ցանցով, բարերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք երկսեռ պիտի լինին, առայժմ հաս-

ցընել 20-ի, նպաստ յատկացնելով իւրաքանչիւրին տարեկան 250 թուման: Դպրոցները պիտի բացուին պարբերաբար, տարեցտարի, հիների վրայ 2 նորը աւելանալով. նրանք պէտք է գտնուին թեմի վիճակաւոր Առաջնորդի հովանաւորութեան և ընկերութեանս անմիջական հսկողութեան և կառավարութեան ներքոյ: Անցեալ 1903 թուի աշնան եղած 2 նախկին դպրոցների թիւը աւելացաւ Ռահուայի և Նախիջևան-Թէփէի երկսեռ դպրոցներով. առաջինը, որ պահում էր ընկերութիւնս իր ծախքով, դրուեցաւ բարերարի հաշուին, իսկ երկրորդը նոր հիմնուեցաւ: Հիմնուած ուսուցչական խմբի անդամների հաղորդած փաստացի ցուցմունքների և գրաւոր վաճակագրութեան վրայ՝ որոշուեցաւ նոր բացուելիք դպրոցը հիմնել Ղարաղըզ գիւղում, որ կենդրոն է Ղարաճալու և Շիրաբադ գիւղերի 70 տուն բընակչով, և Իքի-աղաջի դպրոցը դնել բարերարի հովանաւորութեան տակ, հետևապէս առաջիկալ 1904-5 ուս. տարեշրջանում Պարոն Տիգրան Աֆրիկեանը կունենայ 6 երկսեռ դպրոց:

«Ընկերութեան» հաստատութիւններն են.

- 1) Աղաղանի դպրոցը, Ղարաղաղում:
- 2) Բաբառունի դպրոցը, Բարանդուզ գաւառում, որ պահում է պ. Տ. Աֆրիկեանի հաշուով:
- 3) Բալունիշի դպրոցը, Բարանդուզի գաւառում:
- 4) Գեարդարարտի դպրոցը, Ուրմի գաւառում:
- 5) Դէրէլէքի դպրոցը, Սովուշ Բուլաղում, նպաստ է տրուում պ. Ստեփան Տէր Օհաննէսեանից:
- 6) Դիզաթէքէյի դպրոցը, Բարանդուզում, պահանւում է պ. Տ. Աֆրիկեանի հաշուով:
- 7) Թովլալարի կամ Թազաբադի դպրոցը, Միանդուար գաւառամասում, հանգուցեալ Ադամ Ղազարեանի յիշատակին նրա կտակած 9000 ռուբլու տոկոսով:
- 8) Իքի-Աղաջի դպրոցը, Ուրմի գաւառում:
- 9) Նախիջևան-Թէփէի դպրոցը, Նազու-Չայ գաւառում: պ. Տիգրան Աֆրիկեանի հաշուով:
- 10) Ուրմիի դպրոցը, որ ստանում է պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանից 300 ռուբլի տարեկան նպաստ: Այդ ուսումնարանը գաւառական կենդրոնական դպրոց դարձնելու համար բարերարը խոստացել է առաջիկայ տարուանից իր նպաստի քանակն աւելացնել 150 ռուբլիով, վճարելով ընդամենը 450 ռուբլի:
- 11) Ռահուայի դպրոցը, Ուրմի գաւառում, պահւում է պ. Տ. Աֆրիկեանի հաշուով:

Յիշեալ 11 դպրոցներում, որոնցից 4-ը պահւում է ընկե-

բուժեանս, իսկ 7-ը բարերարների հաշուով, ուսանում էին միջին թուով 420 երկսեռ սաներ՝ 320 աշակերտ և 100 աշակերտուհի: Ձմեռային ամիսներում այդ թիւը հասնում էր 5-600-ի: Աւանդուել են հետեւեալ առարկաները՝ կրօն, հայոց լեզու, թուարանութիւն, հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, գծագրութիւն, գրութիւն, երգեցողութիւն, մարմնամարզութիւն և ձեռագործ: Լուրջ ուշադրութիւն է դարձուած ծրագրի և դասաւանդութեան միօրինակութեան վրայ: Ուսուցիչներից ոմանք աչքի առաջ ունենալով աշակերտների զարգացման չափը և տեղական հանգամանքները՝ աննշան փոփոխութիւններ են մտցրել ծրագրի մէջ, կամ ըստ իրանց, մի փոքր յաւելումներ և յապաւումներ են արել: Վարչութեանս յանձնարարութեամբ Ուրմիի ուսուցիչ պ. Միքայել Պապիկեանը, որ միևնոյն ժամանակ տեսչի պաշտօն ունի, տարուայ ընթացքում, օգուտ քաղելով տօներից և դպրոցական արձակուրդներից, այցելել է շրջակայ դպրոցները և իր տպաւորութիւնները՝ հանդերձ նկատողութիւններով՝ հաղորդել վարչութեանս: Առաջիկայ տարեշրջանում շրջիկ տեսչի գործը՝ դպրոցները յաճախ այցելելու կարևոր խնդիրը, կը դրուի նպաստաւոր հիմունքների վրայ:

Խիստ մխիթարական և հոգեպարար երևոյթ է, որ թափուած ջանքերն ու ծախսուած դրամները տակաւ առ տակաւ իրանց նպատակին են ծառայում: Ուսման ու կրթութեան փրկարար լոյսը հետզհետէ թափանցում է պարսկահայ շինականի խրճիթը: Հայ գեղջուկը ըմբռնելով կրթական գործի յարգն ու նշանակութիւնը՝ սերտ կապում է դպրոցի և եկեղեցու հետ, աշխատում է ձեռք բերել իր կորցրած ազգային առանձնայատկութիւնները՝ լեզուն, կրօնը, սովորութիւնները ևայլն, հետևապէս ոտք կոխում ինքնաճանաչութեան շաւղի վրայ... Ընկերութեանս նիւթական միջոցների ընդարձակուելուց շատ բան է կախուած... Նրա գործունէութեան շրջանը ընդլայնելու և անշեղ ընթանալու համար մի անգամ ձգուած ուղիով, արտաքին օժանդակութիւն է պէտք...

Բացի այդ՝ «Ընկերութեան» հաշուով տարիներից ի վեր պահուում են թաւրիղում 2 մանկապարտէզ՝ Ղալա և Լիլաւա թաղերում: Ղալայի մանկապարտէզը այս տարի յաճախում էին 45 երկսեռ սաներ, որոնցից 32-ը թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 13-ը ձրիավարժ: Լիլաւայի մանկապարտէզը յաճախում էին 46 երկսեռ սաներ, որոնցից 27-ը թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 22-ը ձրիավարժ: Մանկապարտէզները գտնուում էին կանոնաւոր ընթացքում: Վարչութիւնս մասնաւորապէս իր հոգացողութեան առարկայ է դարձրել այդ հաստատութիւնները:

Այս տարի Մոսկուայից բերել տրուեցան ձեռագործի նիւթեր և մանկական խաղալիքներ:

Ընկերութիւնս Ղալայի մանկապարտէզում ունի իր առանձին գրադարան-ընթերցարանը, որի դռները բաց են քաղաքիս ընթերցասէր տիկիներէ և օրիորդներէ առաջ: Գրադարանն ունի 500-ից աւելի ընթերցանութեան գրքեր և ստանում է պարբերական թերթերը:

Ցանկանում ենք «Հայունեաց Ընկերութեան» նպաստաւոր պայմաններ—աւելի ևս մեծ ծաւալ տալու իր օգտակար գործունէութեան:

S.